

# Արենուշների Հատուածի Տարեդարձը

Հ.Բ.Ը.Միութեան սկաուտական բաժանմունքի Արենուշների հատուածը տօնեց իր հիմնադրման 38 ամեակը ուրբաթ մարտի 17-ին:

Ձեռնարկը կազմակերպել էր Արենուշների հատուածը բաղկացած 2 խմբերից՝ Արենուշ թիւ 1 խումբը որը տօնում էր իր 38 ամեակը իսկ Արենուշ թիւ 2 խումբը իր 33 ամեակը:



Ձեռնարկին ներկայ էին կենտրոնական վարչութեան և կանանց մասնաճիւղի ներկայացուցիչները, Ե.Ա.-ների վարչութեան անդամներից, սկաուտական կազմի պատասխանատուները և վերջապէս սկաուտների ծնողները:

Ծրագիրը բացւած համարեց «Մեր Հայրենիք» հիմնով , սակայն հատուածի պատասխանատուի օգնական՝ վարիչ առաջնորդ Աննա Դանիէլեանը բարի գալուստ մաղթելով ներկաներին նշեց թէ քան որ Այս տարի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը տօնում է իր հիմնադրման 100 ամեակը ուրեմն արենուշների հատուածը որպէս մի փոքրիկ անդամ այս մեծ հզօր ընտանիքից իր հատուածի 38 ամեակի տօնակատարութիւնը նւիրում է Հայկական Բարեգործական 100 ամեակին:

Այնուհետ արենուշների հատուածի պատասխանատու՝ վարիչ առաջնորդ Էդլին ՋոհուրԱլէնը փոխանցեց ներկաներին մի համառօտ զեկոյց հատուածի այս տարւայ ընթացքին կատարւած աշխատանքների մասին: Սակայն Արենուշների հատուածը ընկերակցութեամբ փողային նւագախմբի ռիթմիք զարկերին մուտք գործեց սրահ և տողանցքից յետոյ կատարեց երդման արարողութիւնը որտեղ նրանք կրկին և կրկին երդւեցին հաւատարիմ մնալ Աստծուն, ազգին և ընտանիքին:

Երդման արարողութեան ընթացքին սկաուտներին տրւեց գնահատականներ և վկայագրեր:



Դրանից յետոյ Արեւուշները տօնեցին հատուածի տարեդարձը մի փոքրիկ թխածքով որը պատրաստել էր սկաուտներից մէկը: Նաև ստացան գեղեցիկ նւէրներ միւս խմբերից և բաժանմունքներից ինչպէս գնդակ, գրենական պիտոյքներ, թոկ և այլն: Իսկ ծնողների, կենտրոնական վարչութեան, կանանց մասնաճիւղի ու Ե.Ա.-ների վարչութեան կողմից ստացան դրամական նւիրատուութիւններ (սկաուտները խմբերի տարեդարձներին նւիրում են այն ինչ միութիւնը կարիք ունի օրինակ գնդակ,աւել,մաքրութեան պիտոյքներ և ...):



Ծրագրի երկրորդ մասը բաղկացած էր գեղարուեստական տարբեր բաժիններից ինչպէս՝ թատրոն, ասմունք և երգ:

Ծրագրի աւարտին կանանց մասնաճիւղի նախագահ Տկն. Աստղիկ Բաբայեանը կանանց մասնաճիւղի և կենտրոնական վարչութեան անունից շնորհաւորելով Արեւուշներին մաղթեց լաւագոյնը նրանց համար:

Ծրագրի վերջում Հ.Բ.Ը.Միութեան Երիտասարդաց ընկերակցութեան նախագահ՝Աւագ խմբապետ Պրն. Ռայմօնդ Յարութիւնէնը բեմ հրաւիրեց հատուածի նախկին պատասխանատու՝ խմբապետ Կարինէ Նազարեանին որը իր 18



## Ուրախ Երեկոյ

Հայկական Բարեգործական Երիտասարդ  
Արհեստավարժների վարչութեան նախաձեռնութեամբ յունւարի  
6-ին ամանորի առիթով միութեանս սրահում տեղի ունեցաւ  
ուրախ երեկոյ:

ամեայ անվերապահ ու անփոխարինելի աշխատանքներից  
յետոյ մեկնելու է Իրանից, Հայաստանում բնակւելու նպատակով:  
Այսպիսով Պրն. Յարութինենը իր գնահատանքի խօսքը  
յայտնեց սիրելի Կարինէին, մաղթելով յաջողութիւն և  
յառաջադիմութիւն նրան:

Դրանով հանդերձ Արենուշների հատուածը շնորհիւ  
Կարինէին և նախկին պատասխնատուներին ուժգին և վստահ  
քայլում է առաջ նպատակ դնելով դաստերակել նոր սերնդին  
հայեցի դաստերակութեամբ:



Նախնական աշխատանքները կատարելու համար  
վարչուլիւնը կեանքի կոչեց 8 հոգանոց օժանդակ յանձնախումբ,

որպեսզի միասնաբար կատարեն կազմակերպչական աշխատանքները:



Մի ամիս ժրաջան աշխատանքներից յետոյ ուրախ երեկոն շատ յաջող ընթացաւ պարգևեւելով լաւ տրամադրութիւն և ջերմ մտնուլորդ բոլոր ներկաներին:



Հարկ է նշել նաև Ե.Ա.-ների վարչութիւնը 2005 թականի Դեկ. 1-ին միութեանս կենտրոնատեղիում կազմակերպել էր դրամահաւաք, Թեհրանի «Ակունք» մարմնամտային խանգարումներ ունեցող երեխաների կենտրոնի համար Ֆիզէօտրափական մի գործիք գնելու նպատակով և յաջողութեամբ այդ նպատակը իրականցրին:

# Մարզական

Հ.Բ.Ը.Միության Թեհրանի Մասնաճիղի մարզական յանձնախումբը որի կեանքի կոչւելուց անցնում է ընդամենը մի քանի ամիս ,Պրն. Վազրիկ Խուդավերդեանի նախագահութեամբ և յանձնախմբի անդամների ժրաջան աշխատանքների արդիւնքում ենք տեսնում տարբեր մարզական նորակառոյց խմբեր:

Նրանցից գլխաւորն է ֆուտբոլի խումբը,Պրն. Արին Յարութիւնեանի պատասխանատուութեամբ և մարզիչ Պրն. Ժորժիկ Թէյմուրեանի համագործակծութեամբ, բաղկացած 20 մարզիկներից, որոնք շատ կարճատև փորձերից յետոյ մասնակցեցին Հ.Մ. Արարատ Կազմակերպութեան «Գաւաթ»-ի մրցութիւններին, որը տեղի է ունենում ամէն տարի աշնան:

Նրանք մրցելով փորձառու և հմուտ խմբերի հետ անցան կիսաեզրափակիչ փուլ, իսկ յաղթելով այն գրաւեցին 3-րդ տեղը: Գնահատում ենք նրանց տարած աշխատանքները որը պատճառ դարձաւ միութեանս անունը մի անգամ նորից փայլի:

Բացի այդ ներկայում միութեանս հարկի տակ աշխատանք են տանում ճատրակի խումբը բաղկացած 6 անդամներից, մազիչ Պրն. Վահէ Միրզաբեգեանի օժանդակութեամբ շաբաթական 1 օր, էրօբիքի խումբը մարցիչ Օր. Լինեթ գասպարեանի օժանդակութեամբ շաբաթական 3 օր:

Կոնգֆոյի խումբը 15 անդամներով մարզիկ պրն. Ռայմոնդ Չափանեանի համագործակծութեամբ և Օր. Վանէ Բարախանեանի պատասխանատուութեամբ թեթևատլետի խումբը 12 անդամներով Պրն. Զարէհ Միրզախանեան օժանդակութեամբ :Խմբի հետ համագործակցում է Տկն. Վալենտին Ս. Խաչիկեանը որպէս հաշւապահուի:

# Տեղեկանք

Մեծ եղեռնի 91 ամեակին նվիրած Հ.Բ.Ը.Միության երիտասարդ արհեստավարների նախաձեռնությամբ կազմակերպելու է լուսանկարչական ցուցահանդես:

Բոլոր հայ լուսանկարիչներին և լուսանկարչությամբ հետաքրքրուողներին հրաւիրում ենք մասնակցել ցուցահանդեսին:

-Լուսանկարների չափսը 30x 40

**Կազմեց՝**

**Հ.Բ.Ը. Միության գրական կազմը**